որը հազիւ կարողանում են մեղմացնել խառնիճաղանջի կատաղութիւնը: Նրա յուզմունքի պատճառը այն է լինում, որ թանգարանը համարում է մի կռքատուն, ուր աստուածամօր պատկերը դրած է կուռքերի մօտ եւ նրանց հետ հաւասար պաշտւում է:

— Միամիտ խուժանը կարող էր այդպէս մտածել, — ասաց Հայրիկը իր պատմութիւնը վերջացնելուց յետոյ, — բայց ցաւալին այն է, որ նրան գրգռել էին մեր դէմ իմ թշնամի եկեղեցականները: Ես հաւատացած եմ, որ նրանք այդ արել էին ոչ թէ չարամտութեամբ, ոչ թէ մեր վանքին վնասելու նպատակով, այլ իրանք եւս համոզուած էին, որ մենք վանքումը կուռքեր ենք պաշտում, եթէ ոչ, նրանց կարծիքով, ի՞նչ նպատակ կարող էր ունենալ, որ մենք կուռքերի արձանները վանքն էինք տարել եւ դրել էինք աստուածամօր պատկերի մօտ:

— Իսկ եթէ նրանց պատահում է կուռքերի արձաններ գտնել, ի՞նչ են անում, — հարցրեց Ասլանը, աչքերը չհեռացնելով աստուածամօր պատկերից, որի մասին էր խօսքը:

— Փշրում են, ոչնչացնում են:

— Իսկ այդ աստուածամայրը հրաշալի բան է, — ասաց Ասլանը, շարունակելով նայել պատկերի վրայ: — Դա, որպէս երեւում է, 15-րդ դարու իտալացի երեւելի նկարիչներից մէկի գործն է: Բայց ինձ զարմացնում է այն, թէ ինչպէս է պատահել, որ այդ պատկերը յայտնուել է այստեղ:

— Շատ հաւանական է, — ասաց Հայրիկը, — որ բերուած լինի այն ժամանակներում, երբ վանից վաճառականները Վենետիկի եւ Իտալիայի հետ յարաբերութիւններ ունէին: Բայց գիտէ՞ք որտեղից եմ դուրս բերել այդ պատկերը:

— Որտեղի՞ց:

— Մի կիսաւէր գիւղական եկեղեցիից, որի հայ բնակիչները բոլորովին սպառուել էին, եւ նրանց տեղը քրդեր էին բնակւում: Այդ վերջինները, գուցէ իրանք եւս հայկական ծագումից լինելով, դեռ պահպանել էին իրանց հաւատը թէ՛ դէպի եկեղեցին եւ թէ՛ դէպի նրա սրբութիւնները:

Աստուածամօր պատկերը, որի մասին այնքան հիացած խօսում էին թէ՛ Ասլանը եւ թէ՛ Հայրիկը, ինձ ամենեւին չէր գրաւում, գուցէ այն պատճառով, որ ես գեղարուեստի մասին ամենեւին գաղափար չունէի: Ներկերը, որ առաջուց եւս խիստ մռայլ գոյն էին ունեցել, ժամանակների ընթացքում աւելի եւ աւելի սեւացել էին խունկի եւ մոմի ծուխից: Մի տեղում մոմը, ինչպէս